

**Գ Ա Վ Ա Ռ Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն Ի
Հ Ո Գ Ա Բ Ա Ր Զ Ո Ւ Ն Ե Ր Ի Խ Ո Ր Հ Ր Դ Ի 2017 Թ Վ Ա Կ Ա Ն Ի
Հ Ո Ւ Ն Վ Ա Ր Ի 26-Ի Թ Ի Վ 2 Ն Ի Ս Տ Ի
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

ք. Գավառ

26.01.2017թ.

I. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի հաշվետվությունը համալսարանի 2015-2016 ուսումնական տարվա գործունեության և ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Գավառի պետական համալսարանի 2015-2016 ուսումնական տարվա գործունեության և ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:

2. Գավառի պետական համալսարանի 2015-2016 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

II. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի ֆինանսական հաշվետվությունը՝ համալսարանի 2016 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2016 թվականի ֆինանսական հաշվետվությունը:

III. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2017 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշվի վերաբերյալ՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Գավառի պետական համալսարանի 2017 թվականի ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի նախահաշիվը՝ ԳՊՀ բյուջեն:

2. Հանձնարարել ԳՊՀ ռեկտորի պաշտոնակատարին՝ 2017 թվականի ծախսերը կատարել հաստատված բյուջեին համապատասխան:

IV. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի առաջարկը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքի հաստատման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքը:

V. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի առաջարկը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հաստիքացուցակի հաստատման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 6-րդ ենթակետով՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հաստիքացուցակը:

VI. Լսելով Գավառի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար Ռ. Խ. Հակոբյանի առաջարկը «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատման վերաբերյալ և ղեկավարվելով «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 40-րդ կետի 16-րդ ենթակետով՝ ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի գույքի տնօրինման կարգը:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Հ. Հ. Հակոբյան